# ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
# ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՂ ԵՎ ՋԱՐԳԱՑԱԾ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Պրոֆ. Ս. Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

*Հայտնի է, որ ֆեոդալիզմի դարաշրջանից մեզ հասած հայ և օտար սկզբնաղբյուրներում չեն պահպանվել տեղեկություններ հայկական գյուղական համայնքի մասին։ Համայնքի մասին համապատասխան վկայությունների բացակայության հետևանք պետք է համարել այն, որ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը հետազոտող մեր բոլոր պատմաբաններն էլ խիստ թեական, շատ հաճախ կասկածանքով են խոսել համայնքի մասին ոչ միայն միջնադարյան, այլև հին Հայաստանում։ Այսպես, օրինակ, պրոֆ. Ն. Ադոնցը մի շարք առիթներով նշել է, թե «Արևելյան ֆեոդալականություն գիտե տոհմային հողատիրություն, բայց ոչ համայնական», կամ՝ «Հայաստանի երկու խոշոր հարևան պետությունները՝ իրանական արևելքը և բյուզանդական արևմուտքը, որոնց ազդեցության տակ կերտված է հայ կյանքը, ծանոթ չեն բնավ համայնական հողատիրության»[1]։*

*Պրոֆ. Ն. Ադոնցը, բանավեճի մեջ մտնելով ակադ. Հ. Մանանդյանի հետ, գրում է, որ Հ. Մանանդյանը իբր ոչ մի հիմք չունի «համայնատիրական կարգեր որոնել Հայաստանում»[2]։*

*Հայ պատմագրության մեջ հին և միջնադարյան Հայաստանում համայնքի, համայնքային գյուղացիության, համայնական կարգի հանդամանորեն քննարկման պատիվը պատկանում է ակադ. Հ. Մանանդյանին։ Հեղինակն իր մի շարք աշխատություններում բազմաթիվ անգամ նշել է, որ «Համայնական հողատիրությունը...», որը «համատարած ու ընդհանուր երևույթ է եղել պատմական զարգացման սկզբնական շրջանում... գոյություն ունեցած պիտի լիներ նաև Հին Հայաստանում»[3]։ Անդրադառնալով այս նույն պրոբլեմին, ակադ. Հ. Մանանդյանը մատնանշել է, որ «նախարարական Հայաստանում ևս դժվար*

---

*1 Ն. Ադոնց, Հին հայ շինականություն (տե՛ս «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 157—158)։*

*2 Նույն տեղում։ Մեզ համար զարմանալի և միաժամանակ տարօրինակ է Ն. Ադոնցի այս դրույթը։ Չէ՞ որ դեռևս 1908 թ. նա ընդունել է համայնքի և համայնական հողատիրության գոյությունը հին Հայաստանում։ „Аллоды, как вотчины, свободныя от повинностей наследственныя земли, գրել է հեղինակը, восходят генетически к тем земельным владениям, кои составляли когда-то принадлежность общин, а затем с распадом их перешли к главам или тем сильным элементам из которых сложилась будущая знать" („Армения в эпоху Юстиниана", СПб, 1908, էջ 436)։ Ավելին. նա ցանացել է ապացուցել, որ „Крестьянский надел у армян обозначался термином կեանք, արար, կալուած, впрочем эти же выражения прилагаются также к княжеским и церковным владениям" (Նույն տեղում, էջ 480)։*

*3 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 190 (այս և հետևյալ բոլոր ընդգծումները մերն են — Ս. Հ.)։*

հողատիրության նախնական կարգերն (կարդա՝ համայնական հողատիրու-
Ս. Հ.) ու անհետ կորած լինեին կամ «անհավանական չէ,
որ ամ ական-տոհմական կյանքի ֆեոդալացումից հե-
իրություններ՝ որպես երկրագործական արտադրության
լրնել կալվածատիրական նոր պայմաններին և
ծ լինել իր զոյությունը. կրելով իր հիմնական բո-
այնքան խոշոր փոփոխություններ եթե «Ֆեոդալիզ-
աշխատության մեջ ակադ. Հ. Մանանդյանը գտնում
թե՝ Արշակունյաց թագավորության ժամանակ և
էին գոյություն ունենալ «համայնական հո-
միայն, ապա իր «Մինչարշակունյաց Հայաս-
կարգի խնդիրը» ռուսերեն հոդվածում և «Քննական տե-
աշխատության մեջ արդեն անվերա-
ե համայնքային հողատիրության գոյու-
րի ե՝ Բագրատունիների ժամանակաշրջաններում,
օտար աղբյուրների մի շարք վկայություններ, Հ.
որ Հայաստանում արտադրության հիմքը եղել
մասսայական աշխատանքը, և ոչ թե ստրկատիրական
գյուղացի համայնականը և համայնական հողատի-
իր ասույթները հին Հայաստանի և Վրաստանի հա-
ակադ. Հ. Մանանդյանը որպես ընդհանուր եզրակացու-
թյուն գրել է.

общины в аршакидской и багратидской
сомнению, так как в источниках
характерные ее элементы. Мир и общин-
землепользование с пределами земли"[6].

Հայաստանի ներքին կացությանը Զաքարյանների ժա-
անդյանը գրել է. որ աղբյուրների մեջ կան որոշ ակ-
հեռինակը չի վկայակոչում, որոնք հիմք են ծառայում
ժամանակաշրջանում ևս Հայաստանում գոյություն ունի
համայնքներ և համայնքային հողատիրություն»։ Եվ
Հ. Մանանդյանի կարծիքով գյուղացիների հողաբաժիններ-
համայնական ձևը Հայաստանում կոչվել են ոչ թե
կալուածք» ինչպես կարծել է Ն. Ադոնցը, այլ «վիճակ»[8]։
Հին և հայկական համայնքի մասին մի շարք ակնարկներ
նաև Խ. Սամուելյանը։ Անդրադառնալով «հայկական ֆեոդալիզ-
մի առանձնահատկությունների պատմությանը, պրոֆ. Խ. Սամուելյանը նշել
որ ֆեոդալիզմի» ամենակարևոր առանձնահատկություններից
է, որ ֆեոդալական հասարակության մեջ կանոն ու

Проблема общественного строя доаршакидской Армении
АН СССР, № 15, 1945, էջ 20—21)։

Նույն տեղում, էջ 21։ Հմմտ. Джавахов, Государственный строй древней
1905, էջ 9, 71 և հտ.։

Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ.
Երևան, 1952, էջ 177։

Նույնի, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 201, հմմտ. նաև Проблема общест-
доаршакидской Армении, էջ 21։

անփոփոխ գոյություն էր պահպանում գյուղական համայնքը, որից, իսկապես, զարգացել է արևելյան տիպի ֆեոդալիզմը»։ Խ. Սամուելյանի կարծիքով, հայկական գյուղական համայնքը «հայ ժողովրդական կենցաղում մինչև XIX դարի վերջերը՝ զարմանալի պահպանողականությամբ» հարատևել է իր գոյությունը։ Հայաստանում համայնքն այնքան մեծ դեր է խաղացել, որ «հողային պետական իրավունքը... զարգացել է ֆեոդալիզմի ծագման ու կազմավորման պրոցեսում՝ գյուղական համայնքի միջոցով»։ Եթե գյուղական համայնքը, շարունակում է հեղինակը, «...մինչև ֆեոդալական հասարակական ձևի կազմավորումը օժտված էր իր տերիտորիայի սահմաններում գերագույն հողային իրավունքով և համայնական հողերի տերն ու տնօրենն էր, ապա ֆեոդալական պայմաններում այդ իրավունքը ըստ համանմանության փոխանցվում է պետական իշխանությանը, և համայնքին վերապահվում է միմիայն հողային տիրության կոլեկտիվ, բայց ոչ թե սեփականատիրական ձևը»[9]։

Հանգամանորեն քննարկելով հողատիրության «հայրենիք», «պարգևականք», «գանձագինք» ձևերը, համեմատելով այդ ձևերը արևմտաեվրոպական «allod», «feod», «beneficium» ձևերի հետ, Խ. Սամուելյանը գրել է, որ «ֆեոդալիզմը Հայաստանում, ինչպես և ընդհանրապես Արևելքում, զարգացել է նախնադարյան կոմունիստական տոհմային հասարակության քայքայումից, անցնելով գյուղական համայնքի միջով, որը պահպանեց իր գոյությունը Հայաստանի ամբողջ ֆեոդալական պատմության մեջ»[10]։

Չնայած մեր անվանի հայագետները ընդունել են «համայնքի», «համայնքային գյուղացիության» և նույնիսկ «համայնական կարգի» առկայությունը հին և միջնադարյան Հայաստանում, սակայն մինչև օրս էլ դեռևս լուծված չեն այն հարցերը, թե ե՞րբ, պատմական ինչպիսի՞ պայմաններում է ծագել, զարգացել գյուղական համայնքը, զարգացման ինչպիսի՞ էտապներ է անցել այն, ինչպիսի՞ հարաբերություններ են եղել համայնքի և կենտրոնացած պետության, համայնքային գյուղացիության և հողատեր-ֆեոդալների միջև. սոցիալ-տնտեսական ինչպիսի՞ պայմաններում են գտնվել և ի՞նչ իրավունքներ ու պարտավորություններ են ունեցել համայնքային գյուղացիները։ Այս հարցերի քննարկմանն է նվիրված մեր այս հոդվածը։

* *

Մարդկային հասարակության պատմությանը հայտնի են եղել համայնքների տարբեր տեսակներ։ Դեռևս շատ վաղ շրջանում կազմավորվել են մարդկանց սոցիալական տարբեր կոլեկտիվներ՝ «տոհմային» (родовой), «ընտանեկան» կամ «տնային» (домовой) համայնքներ։

«Տոհմային» համայնքը կազմավորվել է միևնույն տոհմակից-ցեղակիցների արյունակցական-ազգակցական կապերի ու հարաբերությունների հիմքի վրա։ «Տնային-ընտանեկան» կամ «նահապետական համայնքը կազմավորվել է «...մայրիշխանության և անհատական ընտանիքների միջև ընկած ժամանակաշրջանում»։ Նա իր մեջ ընդգրկել է մի նախահոր մի քանի սերունդներ, որոնք, ինչպես ասել է Էնգելսը, «բոլորն ապրում են միասին... իրենց

9 Պրոֆ. Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. I, Երևան, 1939, էջ 33, 39, 158—159 (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են — Ս. Հ.)։

10 Նույն տեղում, էջ 185—186։

արտերը միասին են մշակում, սնվում ու հագնվում են բոլորի համար ընդհանուր պաշարներից և արդյունքի ավելցուկի ընդհանուր տերերն են»[11]։

«Տնային» կամ «ընտանեկան» մեծ համայնքը, մի շարք առիթներով մատնանշել է Էնգելսը, հանդիսացել է «...անցման այն աստիճանը, որից զարգացել է գյուղական կամ մարկային համայնքը՝ վարելահողերի ու մարգագետինների անհատական մշակությամբ և նրանց նախ պարբերական, ապա վերջնական բաժանումով»[12]։

Անուամբ մարդկային հասարակություններ հայտնի համայնքների մի ձևից դեպի ավելի բարդ ու կատարյալ ձևը ընդգրկել է պատմական հսկայական ժամանակաշրջան։ «Միայն դարեր անցած, — գրել է Էնգելսը, — երբ ընտանեկան համայնքի անդամների թիվն այնքան մեծացավ, որ այն ժամանակվա արտադրության պայմաններում այլևս անհնարին էր ընդհանուր տնտեսություն վարելը, ընտանեկան համայնքը քայքայվեց։ Մինչև այն ժամանակ ընդհանուր տիրապետության տակ գտնվող վարելահողերն ու մարգագետինները ծանոթ եղանակով սկսեցին բաժանվել այժմ նոր կազմվող առանձին տնտեսությունների միջև, սկզբում ժամանակավոր կերպով, հետագայում միանգամ ընդմիշտ, մինչդեռ անտառները, արոտավայրերն ու ջրերն ընդհանուր սեփականություն մնացին»[13]։

Ոչ միայն «տոհմային», «ընտանեկան» կամ «նահապետական», այլև գյուղական-երկրագործական համայնքն էլ իր գոյությունը պահպանել է հապարամյակների ընթացքում։ Հատկապես նա շատ ուժեղ, կենսունակ է եղել հին Բաբելոնում, Եգիպտոսում, Միջագետքում, Հնդկաստանում, Չինաստանում և արևելյան այն բոլոր երկրներում, որտեղ ֆեոդալական արտադրահարաբերությունները ծագել, զարգացել են «ընտանեկան-նահապետական, կամ ցսքողված» ստրկության հարաբերությունների հիմքի վրա կամ նրանց հետ միաժամանակ։

Գյուղական համայնքը պակաս դեր չի խաղացել նաև այն երկրներում, որտեղ արտադրության ֆեոդալական եղանակը ծագել ու զարգացել է անտիկ ստրկատիրական հարաբերությունների քայքայման ու ճգնաժամի հիմքի վրա։

Այս երկրներում էլ համայնքային սովորույթները այնքան կենսունակ են եղել, որ իրենց կնիքն են գրել նույնիսկ քաղաքների ու քաղաքային կյանքի վրա։ Կ. Մարքսը, խոսելով համայնքի խաղացած դերի մասին գրել է. «Համայնքը ամբողջ միջնադարում եղել է ժողովրդի կյանքի և ազատության միակ օջախը»[14]։

Հին հայկական գյուղական համայնքի մասին մի երկու ուղղակի, բայց մեծ մասամբ անուղղակի վկայություններ է թողել Քսենոֆոնը իր «Անաբազիս» և «Կիրոպեդիա» աշխատություններում։

Անտիկ աշխարհի գորապետը Արմենիան կոչել է «մեծ ու բարեկեցիկ» երկիր։ Այս «մեծ ու բարեկեցիկ» երկրի բնակչությունը նստակյաց էր. նա զբաղվում էր ոչ միայն երկրագործությամբ, այլև այգեգործությամբ, մշա-

---

11 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 77, 186։

12 Նույն տեղում, էջ 80։

13 Նույն տեղում, էջ 186։

14 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том XXVII, էջ 604։

կում էր տեխնիկական կուլտուրաներ։ Արմեն-հայերը ցանում էին ցորեն, գարի և այլ հացարույսեր։ Հացարույսերը աղում էին, պատրաստում հաց, գարուց ստանում էին «գելից խմիչք։ Մշակում էին այգիները, բանջարանոցները, ստանում խաղող, սեխ, ձմերուկ և կորիզավոր բազմատեսակ պտուղներ։ Այգեգործության արդյունքներից ստանում էին անուշահոտ գինիներ, օղի, «գելից» այլ խմիչքներ, պատրաստում էին չամիչ. ունեին բոլոր տեսակի ընգեղեններ, մշակում էին քնջութ, ձիթապտուղ, խոզի ճարպ, զաոր նշի և բևեկնի յուղեր։ Ունեին ընտանի կենդանիներ՝ եզներ, կովեր, ձիեր, ոչխարներ, այծեր և թռչուններ։

Արմենների ճնշող մեծամասնություն, ասում է Քսենոֆոնը, ապրում էր գյուղերում։ Յուրաքանչյուր գյուղ ուներ իր գյուղապետ-գեղջավագը կամ սատրապը։ Գյուղի կառավարչական բարձրագույն օրգանը համարվում էր համայնաժողովը. համայնաժողովը համայնքի գործերը կառավարելու համար ընտրում էր «ավագների» կամ «ծերերի» խորհուրդ, որի մեջ մտնում էին «երևելի և պատվելի արմենները»։ Գյուղապետ-սատրապը մյուս արմենների հարգերվելու համար ապրում էր իր հեմար կառուցված «ապարանք-ամրոցում»։ Նա կառավարում էր գյուղը, բաժանում և վերաբաժանում հողերը. պարտավոր էր ռազմական արշավանքների ժամանակ մատակարարել բանակը, կազմակերպել ու գուրս բերել գումակ։

Հայկական համայնքում ընդգրկված յուրաքանչյուր «տուն», «ծուխ», «երդ» ուներ իր առանձին բնակարանը, որտեղ մարդկանց հետ ապրում էին նաև ընտանի կենդանիները։ Բոլոր «տները... գետնափոր էին, մուտքը ջրհորի բերանի նման, իսկ ներքևն ընդարձակ։ Կենդանիների համար հատուկ մուտք կար փորված, իսկ մարդիկ իջնում էին ցած սանդուղքներով։ Տների մեջ կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ճուտերը»[15]։

Ահա այս առանձին տների կոլեկտիվ կազմակերպությունն էլ հանդիսանում էր գյուղական այն համայնքը, որի հիմքում արդեն ընկած էին ոչ թե արյունակցական-ազգակցական, այլ տերիտորիալ-տնտեսական կապերն ու հարաբերությունները։

Քսենոֆոնի մոտ կան մի շարք այլ վկայություններ, որոնք մեզ հիմքեր են տալիս ասելու, որ այդ պատմաշրջանում արմեն-հայկական հասարակությունը ներառնված էր նյութական և սոցիալական ընդգծված շերտավորման ոլորտի մեջ։ Նստակյաց և երկրագործ արմենները ժողովրդական տնտեսության մեջ լայն չափով օգտագործում էին երկաթը և այլ մետաղներ. նրանք ունեին երկաթե խոփով գութան, արոր։ Քսենոֆոնն իր աշխատություններում փաստեր է բերում, որոնք հաստատում են, որ այս շրջանում մասնավոր սեփականությունը և անհատական հարստությունները աճում են արտակարգ չափերով։ Արմեն-հայերի թագավորի և նրա ընտանիքի հարստությունը կազմում էր 3000 տաղանդ կամ 12 միլիոն ոսկի ռուբլի. բավականին հարստություն ունեին իշխանները, «երևելի և պատվելի արմենները»։ Անտիկ գրագիտները նշում է, որ Արմենիայում բացի թագավորից, մեծամեծ իշխաններից,

15 Քսենոֆոն, Անաբազիս, գիրք 3, գլ. 5, գիրք 4, գլ. 1, 4, 5, 7, Կիրոպեդիա, գիրք 8, գլ. 4, գիրք 3, գլ. 1, 2, 3 (այս մեջբերումները վերցված են ակադ. Հ. Մանանդյանի թարգմանությունից, տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, էջ 381—412)։

գյուղացիներից կային նաև ծառա-աղախիններ, ստրուկներ, ջրկիրներ, փայտակիրներ, գումակավորներ, վարձկան գյնվորներ։ Անտարակուսելի է, որ այս հասարակությունը չէր կարող տոհմային հասարակություն լինել. հասարակական արտադրական միավորն այս շրջանում արդեն գյուղական համայնքն էր։

Դժբախտաբար Քսենոֆոնից մինչև հայ մատենագրության հանգես գալը մենք հայկական գյուղական համայնքի մասին և ոչ մի վկայություն չունենք։ Սակայն մատենագիրները, ինչպես հայտնի է, շատ սակավախոս են, երբ խոսքը վերաբերում է հասարակության համար անմիջական նյութական բարիքներ արտադրողներին։ Բայց եղած հատուկենտ վկայությունները ցույց են տալիս, որ վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում ավելի ու ավելի են կատարելագործվում երկրագործական արտադրամիջոցները, համեմատաբար ինտենսիվ են դառնում հողամշակման ձևերն ու մեթոդները։ Պահպանվել են վկայություններ, այն մասին, որ հողագործ-մշակները հողերը մաքրում են մոլախոտերից, դաշտ են փոխագրում պարարտանյութեր՝ մոխիր, գոմաղբ։ Մշակում են տեխնիկական կուլտուրաներ՝ կտավհատ, վուշ, կանեփ, բամբակ, բրինձ[16]։

Մ. Խորենացու մոտ պահպանված մի երկու թռուցիկ ասույթներից դատելով կարելի է ասել, որ իրոք հին շրջանում ամեն մի գյուղ, ագարակ հանդիսանում էր մի համայնք։ Պատմահայրը խոսելով Արտաշես Ա-ի գործունեության մասին նշել է, որ նա իր պետության գործերը կարգավորելուց հետո հրամայում է՝ «...զսահմանս գրոցն եւ աւաւրակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց...»։ Արտաշես Ա-ի օրոք, շարունակում է Խորենացին, հայոց աշխարհի բնակչության թիվը այնքան էր բազմացել, որ թագավորը կարգադրում է նրանց մի մասին բնակեցնել «...ի լերինս եւ ի հովիտս եւ ի դաշտս...»[17]։ Այն մասին, որ հին Հայաստանում գյուղերի մեծ մասը առանձին համայնքներ էին, որ յուրաքանչյուր համայնական ստանում էր «հաւասար» և «ըստ մարդաթուի» հողաբաժին, ուշագրավ վկայություն ունի Խորենացին։ Հայոց Արշակունի Տիգրան-Տիրան թագավորի օրոք Հաշտյանք գավառում բնակություն հաստատած նրա ազգականները գիմում են թագավորին ասելով. «...ընդարձակեա՛ մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ...»։ Բայց թագավորն «...ոչ ինչ ունկնդիր լինի... այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէին՝ հաւասար տրոնել յիսմեանս»[18]։ Երբ, շարունակում է Խորենացին, հողը «հաւասար» և «ըստ մարդաթուի» բաժանվեց, պարզվեց, որ Հաշտյանք գավառում բնակություն հաստատած ժառանգների հողաբաժինները պակաս դուրս եկան, նրանց մի զգալի մասը փոխագրվեց և բնակություն հաստատեց «ի գաւառն Աղիովտի եւ Առբերանւոյ»[19]։

Վկայակոչելով Մ. Խորենացու այս հատվածները, ակադ. Հ. Մանանդյանը գտնում է, որ «ամենաուշագրավը և կարևորը Խորենացու վկայության մեջ

16 Տե՛ս «Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1914, էջ 259, 324—325. հմմտ. նաև էջ 53, 262, 264, [illegible]—270 և ուրիշներ։ Տե՛ս նաև «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904, էջ 9—10։ «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 174։

17 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 186։

18 Նույն տեղում, էջ 195։

19 Նույն տեղում։

ոչ այնքան նրա պատմական կողմն է... այլ գլխավորապես հողաբաժանման այն հատուկ կարգը՝ «հաւասար» և «ըստ մարդաթուի», որն ըստ երևույթին գոյություն է ունեցել Հայաստանի իրական կենցաղի մեջ և, հավանաբար, հենց Խորենացու իսկ ժամանակ»[20]։

Բանավեճի մեջ մտնելով ակադ. Հ. Մանանդյանի հետ, պրոֆ. Ն. Ադոնցն իր «Հին հայ շինականությունը» ուսումնասիրության մեջ գտնում է, որ «իրեն հայտնի չէ և շատ տարօրինակ է լսել, որ հողի հավասար բաժանումը նշան լինի համայնական կարգի։ Բաժանման որևէ եղանակ ինքնին չէ կարող հատկանիշ համարվել հողատիրության...։ Որպեսզի հողը համայնական համարվի, պետք է ցույց տրվի, որ նրա իրավատերը համայնքն է։ Իսկ բաժանման եղանակը համայնական արժեք կունենա միայն այն դեպքում, երբ նա ծագում է համայնքից որպես արտահայտություն նրա իրավունքի»[21]։ Անկասկած է, որ ուղղակի վկայությունների բացակայության դեպքում խիստ դժվար է ապացուցել, որ հին Հայաստանում հողային ֆոնդի մի զգալի մասի իրավատերը հանդիսացել է համայնքը։ Սակայն ինչպես Խորենացու, այնպես էլ մյուս մատենագիրների մոտ պահպանված մի շարք անուղղակի փաստերը մեզ հնարավորություններ են ընձեռում ապացուցելու, որ հին Հայաստանում առկա են եղել և՛ գյուղական համայնքներ, և՛ համայնական հողատիրություն։ Նախ, ինչպես նկատեցինք, յուրաքանչյուր առանձին գյուղ հանդիսացել է մեկ համայնք, ամեն մի համայնք իր հերթին հանդիսացել է առանձին «տների «ծխերի», «երդերի», «գերդաստանների» կոլեկտիվ կազմակերպություն։ Համայնքներում ընդգրկված գյուղացիները հայտնի են եղել «երդավորներ», «ծխատերեր», շինականներ անունների տակ։

«Տուներ» որպես նահապետական մեծ ընտանիք, հայտնի է եղել դեռևս շատ վաղ ժամանակ։ Մ. Խորենացին պատմում է, որ Հայկը խրոխտանալով Բելի դեմ և չցանկանալով ենթարկվել նրան, իր որդիների, դստերի, թոռների և «այլովք ընդոծնօք» գալիս է «յերկիրն Արարադայ...»։ Այստեղ Հայկը կառուցել է տալիս «տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ՝ որդւոյ Արամանեկայ»[22]։ Անկասկած է, որ այս հատվածում հիշատակված «տուներ» դեռևս նահապետական մեծ ընտանիք է, սակայն այն փաստը, որ նահապետական այս մեծ ընտանիքում կային ընդոծին-օտարածին ազգակցի-ստրուկներ և Հայկի ժառանգություն անցնում է ոչ թե ամբողջ տոհմին, այլ Արամանյակին, ցույց է տալիս, որ Հայկի «տոհմ-տուներ» միատարր, միասնական չէր, այլ առնված էր նյութական ու սոցիալական շերտավորման ոլորտի մեջ։ Ավելին. եթե Հայկի շրջանում «տուներ» դեռևս նահապետական մեծ ընտանիք էր կամ նահապետական համայնք, ապա «տունն» այլ իմաստ ու նշանակություն է ստանում վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում. Այս պատմաշրջաններում «տուն» նշանակել է «կարողություն», «տիրույթ», «կալվածք», և նույնիսկ առանձին շրջան, գավառ, երկիր, աշխարհ։ Ավելի ուշագրավ վկայություններ կան «երդ»-երի, «երդավոր»-ների մասին։

20 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 194—195։

21 Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 158—159։

22 Մ. Խորենացի, էջ 33։

23 Տե՛ս և հմմտ. Մ. Խորենացի, էջ 38, 40—41, 222—223, 228, «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 17—18, 109—110, 119, 135, 214. «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904։

Եղիշեն, Մ. Կաղանկատվացին ասում են, որ Աղվանից Վաչե թագավորը պահանջում է իրեն վերագարձնել իր, «զմանկութեան սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր... ի տղայութեանն հազար Երդ»[24]:

Ահա այս առանձին տների, երգերի, ծխերի կոլեկտիվ կազմակերպությունն էլ հանգիսանում էր այն համայնքը, որը արդեն խարսխված էր ոչ թե ազգակցական-արյունակցական, այլ տերիտորիալ-տնտեսական կապերի ու հարաբերությունների վրա։ Պահպանվել են ուղղակի վկայություններ այն մասին, որ յուրաքանչյուր համայնք սիստեմատիկարար բաժանում և վերաբաժանում էր իր տրամադրության տակ եղած հողերը ոչ միայն «հաւասար» և «ըստ մարդաթուիս», այլև «ըստ երգ»-երի։

Ագաթանգեղոսը բաներ չի գանում գովերգելու Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Լուսավորչի շինարարական գործունեությունը։ Մատենագիրն ասում է, որ իբր նրանք եկեղեցիներ են կառուցել տալիս «...յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գեղս և յագարակս»[25]։

Այս նորակառույց եկեղեցիներին և նրանց բազմաքանակ սպասավորներին նյութապես ապահովելու համար Տրդատ Գ թագավորը կարգադրում է «...յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝... չորս չորս հողս Երդոյ՝ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս Երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»[26]։

Տրդատ Գ թագավորից (298—330) մինչև Պապ թագավորը (369—374) ընկած ժամանակաշրջանում հայ ֆեոդալական եկեղեցին այնքան էր հզորացել, որ Պապը նրան տնտեսապես թուլացնելու համար հրամայում է բռնագրավել «...զհող եկեղեցւոյն զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սկզբան պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց։ Զի լեալն հողոյն կոչինգս հաւասանէր յարմունիս, եւ վերկուսն միայն բողոյր Երկուս հողս։ Եւ ըստ հողոյն բողոյր Երկուս Երկուս առ գեղ մի։ Երէց և սարկաւագ, եւ զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան գեղարս եւ զորգիս երիցանցն եւ սարկաւագացն»[27]։ Արդ, ինչ է նշանակում Ագաթանգեղոսի և Բուզանդի մոտ իրարից անկախ հիշատակված «հող երդոյն»

էջ 47, 52, 122, 125. «Եղիշէի Պատմութիւն Վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 119. «Գիրք պատուիրանաց մատեան հին և նոր կտակարանաց», Վենետիկ, 1860, Ելք Ժ. 24, ԺԲ 37, ԻԶ 6, Ե. 34, Թիւք Ժ. 12, ԺԶ 2, 7, ԼԱ. 9, 17, 18, ԼԲ. 16, 24, 30, Բ. արքաց Ա. 12, Ի. 14, Յովր. ԻԶ. 13, ԼԸ. 6։ Յովհան Բ. 7, «Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի ի Հերակլ», Թիֆլիս, 1913, էջ 211, «Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն», 1887, էջ 41—42, 104—105, 119—129. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 80, «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս Պետերբուրգ, 1887, էջ 222. «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1910, էջ 191—192, 229, 253, 266. «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերականն», Մոսկվա, 1861, էջ 106. «Ուխտանէսի եպիսկոպոսի Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», հատ. Ի., Վաղարշապատ, 1871, էջ 6 և ուրիշներ։

24 Եղիշե, էջ 258. «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Ագուանից աշխարհին», Թիֆլիս, 1913, էջ 24.

25 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», էջ 422—423։

26 Նույն տեղում, էջ 422—423 (ընդգծումները մերն են — Ս. Հ.)։

27 Փ. Բուզանդ, էջ 194։

«Հող երդոյն», ինչպես ցույց են տվել Հ. Մանանդյանը և Ն. Ադոնցը, Ագաթանգեղոսի աշխատության հունարեն թարգմանության տեքստում թարգմանված է «arouras» բառով, որը բառացիորեն նշանակել է հողաչափ, հողի որոշ տարածություն[28]։ Պրոֆ. Ն. Ադոնցը փորձեր է կատարել որոշել հող երդոյի arouras-ի չափը։ «Հույն արուրա» կամ լատին jugum, որ իրոք հողաչափ է, — գրել է հեղինակը, — մեծ բան չէ և անում է մոտ քառորդ հեկտար, դրեթե նույն չափ դեսյատինա[29]։ Ագաթանգեղոսի և Բուզանդի մոտ հիշատակված «հող երդոյի» իմաստը հասկանալու համար, շարունակում է Ն. Ադոնցը, պետք է պիտենալ, որ «Հռոմեական կայսրության մեջ Դիոկղետիանոսի որից հարկահանության հիմք կազմում էր jugum, որ նշանակում է բառացի լուծ... հողի այն քանակը, որի արդյունքը բավական է մի մարդու ապրուստի համար։ Հարկահանները, ասում է Ադոնցը, պարզում և գրի էին առնում, թե յուրաքանչյուր հարկատու «որքան jugum-լուծ հող ունի։ Ամեն մի լուծի համար պահանջվում է որոշ հարկ»[30]։ Եվ վերջապես Ն. Ադոնցի կարծիքով «Ասորի դատաստանագրքի մեջ jugum բովանդակում է որպես հողաչափ 20, 30 և 60 jugerum, նայելով հողի հատկության, այսինքն 5, 8 և 12 հեկտար։ Եթե ընդունենք, որ Պապը մի jugum (կամ մեկ «հող երդոյ» — Ս. Հ.) է թողել զյուղական երեցներին և սարկավագներին, քանակը բավարար է։ Փոքր Հայքում և Պոնտոսում 30 jugera էր համարվում jugum»[31]։ Եթե մենք ընդունենք, որ Հայաստանում էլ յուրաքանչյուր jugum կազմել է 30 jugerum, ապա Տրդատ թագավորը ամեն մի ազարակին սպասարկող երեցի և սարկավագի «երդերին» հատկացրել էր 12, իսկ ավաններում՝ 21 հեկտար հող։ Պապի հողային ռեֆորմիո հետո էլ ամեն մի «երդիր» մնացել է 6 և 10½ հեկտար հող։ Սակայն այս վկայությունների մեջ կարևորը միայն այն չէ, թե յուրաքանչյուր «arouras» «iugum» — «հող երդոյ» որքան հեկտար հող է պարունակել իր մեջ, այլ այն, որ ինչպես Հռոմեական կայսրությունում, Փոքր Հայքում, Պոնտոսում, այնպես էլ հին Հայաստանում գոյություն է ունեցել հողաբաժանման «հաւասար», «բստ մարդաթուի» հատուկ կարգ։ «Հաւասար», «բստ մարդաթուի» կամ «բստ երդիր» հողերը բաժանելիս կամ վերաբաժանելիս, նրանց վրա հարկեր ու տուրքեր նշանակելիս հաշվի է առնվել միայն մի հանգամանք՝ թե յուրաքանչյուր «տուն», «ծուխ», «երդ», «դեհ», «գերդաստան» քանի «ուտող բերան», «զլուխ» կամ անձ ուներ։ Ավելին, հողի նկատմամբ տիրակալության իրավունքը փոփոխման էր ենթարկվում առանձին ընտանիքների անդամների և առանձին գյուղ-համայնքների բնակչության աճի ու փոփոխման հետևանքով։ Համայնքում ընդգրկված ամեն մի «երդիր» նորածին անդամը կարող էր հող ստանալ համայնքային հողերի վերաբաժանման տարիներին միայն, այնպես, ինչպես մահացածի հողաբաժինը վերցվում էր նույնպես հողաբաժանման ժամանակ։ Համայնքում ընդգրկված ամեն մի ընտանիք ստանալով որոշ չափի հողամաս, իր սեփական աշխատանքով և արտադրամիջոցներով կազմակերպում էր իր տնտեսությունը և բերքը յուրացնում որպես մասնավոր սեփականություն։

28 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 17. Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 175։

29 Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 175։

30 Նույն տեղում, էջ 177։

31 Նույն տեղում, էջ 178.

Անկասկած է, որ այս պայմաններում էլ համայնքային հողատիրակալության իրավունքը դեռևս պատկանում էր համայնքին։ Սակայն համայնքից ամենից առաջ անջատվում և ժառանգական սեփականություն են դառնում այգիները, բանջարանոցները։ Այս կատեգորիային պատկանած հողերը դառնում են մասնավոր սեփականություն այն պատճառով միայն, որ նրանց մշակողները վատնում են ոչ միայն հսկայական աշխատանք, այլև անձնական միջոցներ։ Անձնական միջոցների, անձնական աշխատանքի և սեփական արտադրամիջոցների վրա կազմակերպված մասնավոր սեփականության աճն ու զարդացումը ավելի ու ավելի են խորացնում նյութական ու սոցիալական շերտավորումը համայնքի ներսում։ Այս պայմաններում համայնքը ստանում է երկակի բնույթ, մի կողմից՝ դեռևս համայնքի տնօրինության տակ մնում են վարելահողերը, արոտավայրերը, անտառները, ձկնորսարանները, գետերը, լճերը, մյուս կողմից՝ հողաբաժիններից ստացած բերքը, այգիները, բանջարանոցները դառնում են առանձին «երդերի» առանձին համայնականների մասնավոր սեփականությունը։

Արտադրամիջոցների և ստացած արդյունքների նկատմամբ մասնատիրական իրավունքի առկայությունը, մի առիթով ասել է Ֆ. Էնգելսը, ստեղծում է նախադրյալներ, որպեսզի «վարելահողերն աստիճանաբար համայնքի առանձին անդամների մասնավոր սեփականություն դառնան»։ Բուն համայնքի ներսում և նրանից դուրս հետզհետե զարգացող մասնավոր սեփականությունը, շարունակել է Էնգելսը, «տարավ ազատ գյուղացիների առաջացմանը, որոնց սեփականությունն անջատվեց մարկից և մարկի համար դարձավ անմատելի»։ Այս պայմաններում համայնքի յուրաքանչյուր անդամ արդեն իրավունք է ստանում հողակտորների «վերաբերմամբ տնօրինություն անելու, վաճառելու կամ օտարելու այլ ձևերի միջոցով»։ Առանձին համայնականի «տնօրինություն անելու, վաճառելու կամ օտարելու այլ ձևերի» իրավունքը, աստիճանաբար տարածվում է նաև «արտերի, տնատեղերի, բնակելի շենքերի, դրանց կից այլ կառուցումների վրա, որոնք նույնպես լիակատար սեփականության իրավունքի փոխարկվեցին»։

Այս երևույթը, շարունակել է Էնգելսը, հատուկ էր լեռնային, երկրի կենտրոնական մասերի հետ տնտեսական թույլ կապերով կապված շրջաններին միայն[32]։

Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի հայկական երկրագործական համայնքի, համայնքային գյուղացիության իրավունքների և պարտավորությունների մասին, դժբախտաբար, նույնպես շատ վկայություններ չունենք։

Վիմական տարեգրություններում և Մ. Գոշի, Սմբատ Գունդստաբլի, Ստ. Օրբելյանի մոտ պահպանված մի շարք փաստերից ելնելով, կարելի է հաստատապես ասել, որ այս շրջանում էլ դեռևս շատ ուժեղ և կենսունակ էր գյուղական համայնքը։

Մ. Գոշը իր «Յաղագս դատաստանաց թագաւորաց եւ որք ընդ ձեռամբն նոցա» կանոնում ջանում է կարգավորել թագավորի և նրա վասալների միջև ստեղծված նոր հարաբերությունները։ Եթե, սահմանել է օրենսդիրը, թագավորն իր վասալ իշխանին նվիրել է «գաւառ» և իշխանը կառուցել է տվել

32 Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, Երևան, 1933թ., էջ 82 (ընդգծումները մերն են — Ս. Հ.)

«երերդ եւ կամ աւանն», ապա այդ նորակառույցները պետք է «ի ժառանգութիւն համարեսցի նմա»: Ոչ ոք, շարունակում է Գոշը, իրավունք չունի խախտել թագավորի կամքը կամ թե փոփոխել այդ ժառանգությունն «առանց մեծի եւ իրաւացի յանցանաց»։ Ավելին, եթե իշխանները հանցապարտ են, եթե նրանց կենդանության օրոք բռնագրավված է եղել նրանց ժառանգությունը, ապա «զկնի մահու նոցա՝ որդւոց նոցա լիցի հրամանաւ թագաւորի»[33]:

Այնուհետև սահմանելով մեծամեծ իշխանների, նրանց ձեռքի տակ եղած ազատների և սրանց ու շինականների միջև ստեղծված հարաբերությունները Գոշը գրել է. «Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատք լիցին եւ ընդ ազատաց ձեռամբ շինականք. յորժամ աւերս շինեսցեն և հողս հատանիցեն ի մայրեաց, ստացուած լիցի անփոփոխ եւ որդւոց նոցա յետ մահու. այլ փոփոխումն ի վերայ մեծի յանցանաց եւ իրաւացի լիցի, եւ մի՛ ի պատճառս զրպարտութեան փոփոխիցին»[34]։ Կան նաև այլ վկայություններ այն մասին, որ նորակառույց բնակավայրը, գյուղը, ավանը հանդիսանում էր առանձին համայնք, որ համայնքը դեռևս ազատորեն տնօրինում էր իր տրամադրության տակ եղած հողային և ջրային ֆոնդը, որ այդ ֆոնդերը համայնքը սիստեմատիկաբար և այն էլ «հաւասարադատութեամբ» բաժանում և վերաբաժանում էր համայնքում ընդգրկված առանձին «ծխերի» և նրանց անդամների վրա, որ յուրաքանչյուր համայնական ստանում էր «հաւասար» և «ըստ մարդաթուի» հողաբաժին և այն ժառանգելու, կտակելու, օտարելու իրավունք։

Եթե որևէ գյուղ կամ համայնք նոր է հիմնադրվում, ասում է Գոշը, ապա «չէ հաստատուն բաժանումն հողոյն և ջրին եւ այլոց այսպիսեաց մինչ բաւական բնակիչք ժողովիցին և ապա բաժանումն հաստատիցի»[35]։ Այս կանոնը որոշ փոփոխությամբ Գոշից անցել է Սմբատին։ «Վասն որ նոր գէղ շինէ» իր ՌՀԶ կանոնում Սմբատ Գունդստաբլը սահմանել է, որ «Չէ պատեհ մենակ զհողերն սինաւորով բաժնել, ինչուր զայ ամէն մարդ ու լցվի»[36]։ Սակայն ավելի ուշագրավ են երկու օրենսդիրների կողմից մշակված այս կանոնների երկրորդ մասերը։ Եթե գյուղ-համայնքը, գրել են Գոշը և Սմբատը, որևէ պատճառով ավերվել ու քայքայվել է և նրա բնակիչները լքել են իրենց հայրերի ու պապերի բնակավայրը, բայց շատ կարճ ժամանակամիջոցում կրկին վերադարձել ու բնակություն են հաստատել նույն գյուղում ու վերականգնել նախկին համայնքը, ապա յուրաքանչյուր բնտանիք կարող է «ըստ սահմանի նախնեաց» կամ «զիր ճանչած սինաւոն» ետ ստանալ իր ժառանգությունը։ Բայց եթե գյուղը շատ վաղուց է ավերվել և առանձին բնտանիքների հողաբաժինների սահմանները արդեն «անգիտելի» են կամ թե «տէրութեան փոփոխումն» է եղել, ապա իրավունք է վերապահվում համայնքին, նրա «գլխաւորին» կամ նրանց ովքեր «զայնոց... գլուխք լինան», «նորոգ արասցեն... հողոյն և ջրին և այլոց այսպիսեաց» բաժանումը և վերաբաժանումը։ Հողերի ու ջրերի բաժանումը կատարել «ըստ երդերի», «հաւասար», «ըստ մարդաթուի» կամ «հաւասարադատութեամբ»։

---

33 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 317 (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են — Ս. Հ.)։

34 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 317։

35 Նույն տեղում, էջ 415։

36 Смбат Спарапет, Судебник, էջ 151։

Հողերի և ջրերի «հաւասարաղատութեամբ» բաժանելուց առաջ, ամբողջ գյուղի կամ համայնքի համաձայնությամբ, հողի մի մասը պետք է հանձնել գյուղի եկեղեցուն, իսկ «մասն աւելին» պետք է բաժին հանել նրան, ով «գլխաւորն իցէ գեղջն վասն հոգալոյ գայլոց»[37].

Մ. Գոշը և Սմբատ Գունդստաբլը ավելի ուշագրավ կանոններ են մշակել այն մասին, որ առանձին գյուղերը, շները հանդիսանում էին առանձին համայնքներ: Մխիթար Գոշն իր «Յաղագս դատաստանեաց սահմանաց», իսկ Սմբատն իր «Վասն սինաւոաց» կանոններում գտնում են, որ «սահմանք» կամ «սինաւոք» «գիւղից» պետք է որոշել հատուկ նշաններով և «գրով ամրցնել»: «Արձանօք» կամ «նշանաւ» գյուղերի սահմանները հաստատելիս պետք է որոշել նաև յուրաքանչյուր գյուղ-համայնքի հողերի, անդաստանների, այգիների, տունկերի սահմանները: Մեր օրենսդիրները նորաստեղծ գյուղ-համայնքները հռչակում են ապահարկ: «Նոր շինեալ տեղեաց, — ասում է Գոշը,— ազատութիւն լիցի մինչ զի ամենայնիւ հաստատիցի»[38].

Այս և մեզ հայտնի այլ կանոնները հաստատ հիմքեր են տալիս ասելու, որ միջնադարյան Հայաստանում դեռևս շատ ուժեղ և կենսունակ էր գյուղական համայնքը: Յուրաքանչյուր համայնք ուներ իր սեփական «սահմանքն» կամ «սինաւոքն», որոնց շրջակայքում էլ ընկած էին համայնքային հողերն ու այլ մշակելի տարածությունները: Ամեն համայնքի գլուխ կանգնած էր «գլխաւորն գեղջին»[39], «ժողովրդապետն» կամ «դեհկանը»[40]:

«Գեղջավագի», «ժողովրդապետի» կամ «դեհկանի» գործունեության շառավիղը շատ մեծ էր. ինչպես նկատեցինք, նրա ղեկավարությամբ էր կատարվում «հողոյն եւ ջրին եւ այլոց այսպիսեաց» բաժանումն ու վերաբաժանումը. նա էր ղեկավարում առուների, ջրանցքների, կամուրջների, ճանապարհների շինարարությունը, լուծում համայնականների կամ հարևան համայնքի միջև ծագած վեճերը. նշանակում էր ու գանձում հարկերը, տուրքերը: Հանդիսանալով նաև հողատեր-ֆեոդալների կամ ֆեոդալական պետության ներկայացուցիչը գյուղում, նա պարտավոր էր կազմակերպել հասարակական մասշտաբի հարկագիր ու ձրի աշխատանքը, ռազմական արշավանքների ժամանակ դուրս բերել գումակ, կազմակերպել բանակի մատակարարումը և այլն: Նա միաժամանակ պարտավոր էր խիստ հսկողություն սահմանել համայնքային դաշտերի, արոտավայրերի, այգիների, ջրերի վրա, որպեսզի յուրաքանչյուր համայնական օգտվեր հավասարապես: Գեղջավագը սովորական համայնականից տարբերվում էր նրանով, որ իր այս ծառայությունների դիմաց ստանում էր, ինչպես նկատեցինք, «մասն աւելի» հողամաս:

Սկզբնաղբյուրներում պահպանված հատուկենտ վկայությունների ուշադիր քննարկումը ցույց է տալիս, որ չնայած գյուղական համայնքը միջնադարյան Հայաստանում դեռևս շատ ուժեղ և կենսունակ էր, բայց համայնական այգիները, վարելահողերի մի մասն աստիճանաբար անցնում է առանձին հա-

37 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 415, հմմտ. Смбат Спарапет, Судебник, էջ 151:

38 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 441: Смбат Спарапет, Судебник, էջ 170—171:

39 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 318:

40 Նույն տեղում, էջ 415:

41 Նույն տեղում, էջ 435:

մայնականներին որպես ժառանգական, օտարելի սեփականություն։ Մ. Գոշի և Ամրատ Գունդստաբլի այն դրույթները, թե ովքեր «հողս հատանիցեն ի մայրենաց ստացուած լիցի անփոփոխ և որդւոց նոցա յետ մահու» կամ թե յուրաքանչյուր երդ իրավունք ունի «ըստ սահմանի նուխնեաց» կամ «զիր հին ճանաչած սինաւոն» ժառանգել իր հայրերի և պապերի հողակտորները՝ ապացույց են, որ մեզ մոտ էլ վարելահողերն աստիճանաբար համայնքում ընդգրկված առանձին «երդերի» կամ համայնականների սեփականությունն էին դառնում։ Համայնքներից աստիճանաբար անջատվում էին ոչ միայն վարելահողերը, այլև այգիները, բանջարանոցները։ Այն մասին, որ զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում էլ դեռևս շատ կենսունակ էր գյուղական համայնքը, որ հայ շինականության մի զգալի մասը դեռևս ընդգրկված էր գյուղական համայնքում և հանդիսանում էր համայնքի իրավահավասար անդամն ու կապված էր նրա հետ՝ մի երկու օրենք են սահմանել Գոշը և Գունդստաբլը։ «Յաղագս դատաստանաց գաւառաց և գեղից եւ նոցունց իրաց» ժ կանոնում խոսելով համայնքում ընդգրկված շինականների իրավունքների ու պարտավորությունների մասին Մ. Գոշը գրել է, որ շինականները «գեղջին կամօք» միայն կարող են վարձակալել օտար վարձկաններ և նրանց հանձնել հավաքելու համայնքի այն բերքը, որը «ոչ իւրեանց իցէ»։ Եթե կա գյուղի կամ համայնքը համաձայնություն, այդ դեպքում «շինականաց իրաւացի է տասանորդել օտարացն ի կթել պտղոցն, որ ոչ իւրեանց իցէ, այնոցիկ՝ որոց իցէ սահմանն և ըստ խնդրոյ նոցին կամօք եղիցի»[42]։

Մ. Գոշը և Ամրատ Գունդստաբլը մշակել են հատուկ կանոններ հանցապարտ համայնականի արբերքի համար համայնքի կոլեկտիվ պատասխանատվության մասին։ Եթե գյուղ-համայնքի սահմաններում հայտնաբերվում է սպանված մարդու դիակ, և հանցապարտը անհայտ է, ապա իրավունք է վերապահվում հանցապարտին որոնելու, հայտնաբերելու և դիակը թաղելու համար հրավիրել ոչ միայն այն շենի բնակիչներին, որի սահմանների մոտ կատարված է հանցագործությունը, այլև «այլ շինութեանն ազէկ մարդիկ»։ Հավաքված համայնականները և այլ շենի «ազէկ մարդիկ» պարտավոր են «շափեն թէ ի յոր շինու ի մատ է սպանեալն»։ Եթե սրանք հաստատում են, որ դիակը գտնվել է այս կամ այն շենի մոտ և հանցապարտն անհայտ է, ապա այդ շենի շինականները պարտավոր են գնել «պատանի և մոմեղէն, ու տան թաղում...»։ Բայց եթե սպանվածը ապատ քաղաքացի է և ոչ վարձկան կամ ծառա, շենը պարտավոր չէ վճարել նաև տուգանք, բայց եթե «տէր զայ՝ նա զարեան զիենն այն շէնն վճարէ՝ որ ի մատ լինի»[43]։

Եթե մենք այլ փաստեր չունենայինք, ապա օրենքի ուժ ստացած այս կանոնները բավական էին ապացուցելու, որ յուրաքանչյուր շեն հանդիսանում էր մի տերիտորիալ-տնտեսական համայնք՝ իր անդամների համայնական շահերի ընդհանրությամբ։ Ակնհայտ է, որ ամեն մի շեն-համայնք կոլեկտիվ

---

42 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 327։ Մ. Գոշի Դատաստանագրքի ձեռագիր մի քանի օրինակներում ավելի որոշակի է սահմանված համայնքի անդամ շինականի իրավունքներն ու պարտավորությունները։ Համայնական շինականն իրավունք չի ունեցել «տասանորդել օտարացն ի կթել պտղոցն», եթե չկա համայնքի համաձայնություն։ Կան շատ վարձկաններ, գրել է Գոշը, որոնք «գան եւ կթեն եւ գվարձս առնուն ի տանէն գմինն. եւ գեղջին կամօք լիցի յորում սինոր պտղոյն էր»։

43 Смбат Спарапет, Судебник, էջ 139. Մ. Գոշ, Դատաստանագիրք. էջ 383։

կերպով պատասխանատու էր իր առանձին անդամի հակահասարակական արարքի համար։

Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի գյուղական համայնքի մասին մի շարք վկայություններ է թողել Ստ. Օրբելյանը։ Սյունյաց տան մատենագիրը բաներ չի զտնում փառաբանելու հայոց թագավորներին, մեծամեծ, գահակալ իշխաններին, բազմաքանակ ազատներին այն առատ նվերների համար, որ նրանք հանձնում են Սյունյաց վանքերին ու եկեղեցիներին։ Հայոց աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները, ասում է պատմիչը, վանքերին ու եկեղեցիներին վախմ են անում իրենց պապերից ու հայրերից իրենց «հրիտակ» հասած կամ «ընդ գնոյ գնեալ եւ ստացեալ» «հալալ հայրենիք» գյուղեր, այգիներ, կալվածներ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ։

Հայոց Սմբատ Բագրատունի թագավորը և հոգատեր-ֆեոդալները միայն Տաթևի վանքին նվիրում են շուրջ 50 գյուղ, ավան, շեն։ «Բայց թէպէտ զայս ամենայն տուրս արարին, — գրել է Ստ. Օրբելյանը, — զրնակիչս բերդին Յուրայ ոչ կարացին հանել ի տեղւոյն. զի հին հայրենի տէրք էին և բարբարոսք եւ պիղծ մարդիկ. այսպէս եւ ոչ զՏամալէկս... կարացին սեպհականել. զի եւ նոքա նոյնպիսիք էին (այսինքն «հին հայրենի տէրք էին»—Ս. Հ.)։ Էր եւ աւազականոց մի բերդ... որ Առաւելուդաշտն կոչեն... եւ զայն եւս ոչ հալածեցին. յորոց վտանգ ոչ սակաւ հասանէր եկեղեցեանն»[44]։

Անկասկած է, որ այս հատվածում հիշատակված գյուղերը հանդիսանում էին առանձին համայնքներ, իսկ համայնքներում ընդգրկված գյուղացիները՝ հին հայրենատերք-սեփականատերեր։ Որ համայնքը դեռևս հանդիսանում էր համայնական հողերի և կալվածների տնօրինողը, որ հին հայրենատեր գյուղացիները հանդիսանում էին իրենց հողաբաժինների սեփականատերերը, այդ են ապացուցում նույն մատենագրի մոտ պահպանված այլ փաստեր ևս։

Երբ Տաթևի վանքը, շարունակում է մատենագիրը, համառ պայքարից և հսկայական միջոցներ ծախսելուց հետո չկարողացավ դուրս անել վանքիս կից երեք գյուղերի բնակիչներին և «սեպհականել» նրանց հողաբաժինները, դիմեց Սյունյաց Սմբատ իշխանի և Սոփի իշխանուհու օգնությանը։

Սյունյաց Սմբատ իշխանը և Սոփի մեծ իշխանուհին գործարքի մեջ են մտնում Տամալեկ գյուղի «հին հայրենի տէրք» գյուղացիների հետ և վճարելով 1000 դահեկան, գնում և վանքին են նվիրում Տամալեկ գյուղի հողերը։ Այս գործարքից հետո Տաթևի տեր Հակոբ վանահայրը թողել է հետևյալ կալվածագիրը.

«Այս իմ ձեռին գիր է Տէր Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի. բազում ջանիւ և աշխատութեամբ թափեցի զՏամալէկս որ բազում նեղութիւն էին հասուցեալ տունս. եւ Տեառն Յովհաննիսի ջանացեալ էր եւ չէր կարացեալ թափել։ Արդ՝ հնազանդեալ մեր հրամանացս տէր Սմբատ եւ Սոփիա տիկին՝ առին ընդ գնոյ 1000 դահեկանի, և ետուն ի սուրբ նշանս»[45]։

Ոչ միայն մեծամեծ, գահակալ իշխանները, այլև հայոց թագավորները երբեք տիրակալության կամ տնօրինության իրավունք չեն ունեցել համայն-

---

44 «Պատմութիւն նահանգին Սիւնեաց, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 230 (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են — Ս. Հ.)։

45 Նույն տեղում, էջ 271։

քային հողերի նկատմամբ։ Ահա մեկ հայտնի բազմաթիվ վկայություններից մի երկուսը միայն։

906 թ., գրել է նույն պատմիչը, երբ ավարտվեց Տաթևի վանքի շինարարությունը, վանքի առաջնորդը և 500 «եղբայրները» վանքի բացման առիթով հրավիրում են ոչ միայն Սյունիքի, այլև Հայաստանի մյուս շրջանների մեծամեծ իշխաններին և այդ թվում Սմբատ Բագրատունի թագավորին։ Հայոց թագավորը վանքին տալիս է առատ նվերներ, բայց նա ստիպված հսկայական միջոցներ է վճարում և «հին հայրենի տէրք» գյուղացիներից «ընդ գնոյ» գնում ու վանքին է հանձնում Հարժիք գյուղը և Կաբճավանը[46]։ 976 թ. Նախավկայի վանք այցի եկած Աշոտ Բագրատունի թագավորը նույնպես վճարելով հսկայական միջոցներ, որպես «արծաթագին հայրենիք» գնում է Ճվաշ գյուղը և նվիրում նույն վանքին[47]։ Աշոտ Բագրատունու դուստր Հռիփսիմեն թողել է հիշատակ այն մասին, որ ինքը, վճարելով մեծաքանակ դրամ, «ընդ գնոյ» գնում է Աստապատ գաստակերտը և նվիրում նույն վանքին[48]։

Ամենից ուշագրավն է 1292 թ. վիմական արձանագրությունը։

Այս արձանագրությունից ակնհայտ է դառնում, որ Սյունյաց Տարսայիճ մեծ իշխանի կին Մինախաթունը իր «հալալ ընչից» վճարելով զգալի միջոցներ գնում է հին «հայրենատիրացն» պատկանած հողերն ու այգիները և նվիրում Նորավանքին։ Խիստ ուշագրավ է սույն արձանագրության վերջին մասը։ Իշխանուհին տալիս է արձանագրել, որ «այս տուրքս» նա վանքին է հանձնում ոչ թե զրկողության ճանապարհով, այլ «հալալ դրամագնով»[49]։

Այսպիսով, գյուղական համայնքը դեռևս շատ ուժեղ ու կենսունակ էր նաև զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում։ Համայնքում ընդգրկված «հին հայրենի տէրք» գյուղացիության և հողակտորների և անձերի վրա դեռևս չէր հաստատվել հողատեր-ֆեոդալների իշխանությունը։ Գյուղացի համայնականն ուներ իր ժառանգական, օտարելի հողակտորը, այգին, բանջարանոցը, իր և ընտանիքի անդամների անձնական աշխատանքի ու սեփական արտադրամիջոցների վրա հիմնված մասնավոր սեփականությունը։

Բայց անմտություն կլիներ ասել, որ համայնքում ընդգրկված գյուղացին թե՛ անձնապես և թե՛ տնտեսապես բացարձակապես անկախ ու ազատ էր և ենթակա չէր ֆեոդալական պետությանը կամ հողատեր ֆեոդալին։ Սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ ֆեոդալական պետությանը, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին հարկեր և տուրքեր են վճարել ու ֆեոդալական այլ պարհակներ կատարել ոչ միայն նրանց սեփական, այլև նրանց ենթակա «տուրքապարտ» գյուղերի բնակիչները ևս։

Մ. Գոշն իր «Յաղագս դատաստանաց թագաւորաց եւ որք ընդ ձեռամբն նոցա» կանոնում ասում է, որ թագավորներին իրավունք է վերապահված ոչ միայն իշխել իրենց հպատակների վրա, այլև «հարկ առնուն յաղագս»[50] կամ «ի շինուածս քաղաքի եւ բերդի, սահմանել է Գոշը, եթէ պակասիցէ գանձ արքունի, — ամենեքեան հասարակ վճարիցեն»[51]։ Այս կանոններում հիշատակ-

46 Նույն տեղում, էջ 228—229։
47 Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 133։
48 Նույն տեղում, էջ 139—140։
49 «Վիմական տարեգիրք», էջ 134—136։
50 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 300։
51 Նույն տեղում, էջ 310։

ված «յազգաց» և «ամենեքեան» բառերը ապացույց են այն բանի, որ ազգի և ամենայն ժողովուրդ հասկացությունների մեջ իմաստավորվել է նաև համայնքային գյուղացիությունը։ Սկզբնաղբյուրներում պահպանված բազմազան վկայությունների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի անմիջական նյութական բարիքներ արտադրողները (այդ թվում նաև համայնքային գյուղացիությունը) ֆեոդալական պետությանը, հողատեր-ֆեոդալներին, ֆեոդալականացված վանքերին ու եկեղեցիներին վճարել են բազմատեսակ հարկեր ու տուրքեր և կատարել այլ պարհակներ։ Անմիջական նյութական բարիքներ արտադրողները վճարել են «արքունի հարկ», «արքունի չարք», «արքունի նեպակ», «թաստակ», «աշխարհական հարկ», «շարիատ», «խալե», «անասնահարկ», «հաս», «պտուղ», «տասանորդ»։ Բացի այս և այլ հարկերից նրանք կատարել են «կոռ», «բեկար», «արքունի լուծ», «արքունի ծանրութիւն» պարհակները։

Անտարակուսելի է, որ ինչպես պետական-արքունական, մասնատիրական, վանական-եկեղեցական հողերի վրա նստած, այնպես էլ համայնական գյուղացիները հարկատու և տուրքատու էին ու կատարում էին այլ պարհակներ։

Սակայն համայնքում ընդգրկված գյուղացիության կախվածությունը, համեմատած գյուղացիական այլ խավերի հետ, ուներ խիստ սահմանափակ բնույթ։ Ինչպես նկատեցինք նրա անձի վրա դեռևս չէր տարածվել հողատիրոջ իշխանությունը. համայնքը դեռևս շատ կենսունակ էր և ունակ դիմադրելու համայնքի նկատմամբ հողատեր-ֆեոդալների ոտնձգություններին։ Ավելին, կան խիստ ուշագրավ վկայություններ այն մասին, որ համայնքում ընդգրկված «հին հայրենի տէրք» գյուղացիները տարեկան պարտավոր էին կատարել 4—5 օր կոռային աշխատանք միայն, այն դեպքում, երբ մասնատիրական գյուղացիության կոռային աշխատանքը նրանցից խլում էր 40—60 օր։

Ահա այդ վկայությունները։ Մ. Գոշը իշխաններին և տերերին պատկանած հողերի վրա նստած գյուղացիության կոռային աշխատանքը որոշել է շաբաթը մեկ օր։ «Այսպէս և յաւուրս շաբաթու յեօթնէ մին գործիցի իշխանին և տէրունի, այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է»[52]։ Սակայն տերերը, իշխանները սիստեմատիկաբար խախտում էին այս օրենքը և ստիպում էին իրենց ենթակա գյուղացիներին կատարել «մեծ ու փոքր» կոռեր. գյուղացին պարտավոր էր կատարել ոչ միայն «մարդոյն», այլև «եզին», «սայլին», «կամին» և «վեցկէ» կոռեր։ Դատելով ըստ Ստ. Օրբելյանի մոտ պահպանված մի վկայության, կարելի է հաստատապես ասել, որ կոռ էին կատարում նաև առանձին համայնքները և համայնքներում ընդգրկված «հին հայրենի տէրք» գյուղացիները։ Ստ. Օրբելյանին վերագրված «Ժամանակագրութիւն» աշխատության հավելվածում պահպանվել է մի խիստ ուշագրավ «հարկացուցակ»։ Ուշագրավ է նաև նրա խորագիրը՝ «Հուլվարն այսինքն վանական գիւղօրէից հողոց տասանորդքն»[53]։ Այստեղ հաջորդաբար թվարկված

52 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 315։

53 Պատմագրության մեջ այն կարծիքն է հայտնվել, որ իբր այս «հարկացուցակը» կազմրվել է XVII դարում։ Բայց հայտնի է, որ Սյունիքի գավառների վարչական կազմը XII—XIII դարերում ենթարկվել է լուրջ փոփոխությունների։ Հայտնի է նաև, որ 1006 թ. հետո Սյունիքի կազմի մեջ մտնում է նաև Նախիջևան քաղաքը։ Եթե «հարկացուցակը» կազմված լիներ XIII դարից հետո, կամ XVII դարում, ապա բնական է, որ վարչական այս փոփոխությունները պետք

են այն բոլոր գյուղերի անունները, որոնք պարտադիր կերպով Տաթևի վանքին վճարել են «հաստ», «պտուղ» և «տասանորդ» կոչված հարկերն ու տուրքերը։ Սակայն հարկացուցակում նշված է նաև վանքահպատակ գյուղերի բնակչության կողմից վանքի օգտին կատարված կոլեկտիվ կոռային աշխատանքի քանակը։ Այսպես օրինակ, Տաթև գյուղի բնակիչները բացի «ԻԴ բեռ ցորեն, Ը լիտր մեղր» վճարելուց, պարտավորվել են տարեկան «գլխավին բոլոր գեղովն մէկ մէկ օր վար անեն. Բ օր հունձ անեն եւ մէկ օր ալ ցաւ անեն ինչ որ լինի. եւ մէկ օր եզնարածին վանքի համար խոտ հարեն»։

*Սրվարանց գյուղը պարտավորվել է վճարել «ԺԵ բեռն և Ը մարգան ցորեն, և Ա օր վար անեն Բ օր հնձեն, և եզնարածին Ա օր խոտ հարեն, և իւրեանց գեղի առաջի մարգիին ևս հարեն և Ա օր ալ ցաւ անեն։ Աղանց՝ Թ բեռն, Ա մարգան ցորեն և Ա օր վարեն և Ա օր վեկուն եզնարածին խոտ հարեն և օր հնձին ջաւ անեն։ Տանձատափ՝ Չ բեռն և Ե մարգան ցորեն, ԱԲ դեան հուլվար տան. Ա օր վարեն, Դ օր հնձեն, Ա օր խոտ հարեն և Ա օր ինբաա հանգիպի ջաւ անեն վանքիս»*[54]։

*Արդ, ի՞նչ են ապացուցում այս հատվածները. նախ նրանք գալիս են մեկ ավելորդ անգամ հաստատելու, որ ամեն մի գյուղ տանդիսացել է մեկ առանձին համայնք։ Համայնքը պատասխանատու է եղել հասարակական մասշտաբի ձրի և հարկադիր աշխատանքի կազմակերպման համար։ Այնուհետև, եթե մասնատիրական գյուղացիները անձամբ և իրենց քաշող ուժով պարտավոր էին կոռ կատարել հողատեր-ֆեոդալի կալվածքների վրա, նրա տանը, կալում, ապա համայնքում բացառվել է անհատական կոռը. կոռը կատարել է ամբողջ գյուղը և այն էլ տարին 4—6 օր։*

*Ավարտելով մեր հոդվածը ավելորդ չենք համարում կատարել մի քանի ընդհանուր եզրակացություններ։*

*1. Գյուղական-երկրագործական համայնքը մեզ մոտ կազմակերպվում է դեռևս նախաֆեոդալական շրջանում. արդեն Ք՚սենոֆոնի օրոք նա հանդիսանում էր հայկական հասարակության նյութական բարիքներ արտադրող հիմնական միավորը։*

*2. Գյուղական համայնքն իր գոյությունը պահպանում է և՛ վաղ, և՛ զարգացած ֆեոդալիզմի դարաշրջաններում։ Ինչպես նախորդ, այնպես էլ այս պատմաշրջաններում յուրաքանչյուր գյուղ, շեն, ապարակ հանդիսանում էր առանձին համայնք։ Յուրաքանչյուր գյուղ-համայնք իր տնօրինության տակ ուներ վարելահողեր, մարգագետիններ, արոտավայրեր, գետեր, լճեր, ձկնորսարաններ։ Սակայն յուրաքանչյուր տարի կամ թե մի քանի տարին մեկ անգամ համայնաժողովի որոշմամբ և գեղջավագի առաջնորդությամբ կատարվում էր «հաւասար ե ըստ մարդաթուի» վարելահողերի բաժանումը և վերաբաժանումը։*

*Հողն ու ջուրը բաժանելիս, հարկերն ու տուրքերը բաշխելիս հաշվի էր առնվում, թե յուրաքանչյուր «տուն», «ծուխ», «երդ», «գերդաստան» քանի*

---

*է որ իրենց արտահայտությունը գտնեին հարկացուցակում։ Հետևաբար մենք գտնում ենք, որ հարկաուցակը կազմվել է ոչ շուտ քան X և ոչ ուշ քան XII դարը, բայց ոչ մի դեպքում XVII դարում։*

54 Ա ղ. Ա ր ր ա հ ա մ յ ա ն. Ստեփաննոս Օրբելյանի «Ժամանակագրությունը», Երևան, 1942, էջ 44։

«գլուխ», «ուտող բերան», անձ ուներ և քանի «լուծ»։ Ամեն մի երդ ստանում էր որոշակի հող, որը հայտնի էր «հող երդոյ» անվան տակ։ Ամեն մի երդ ստանալով իր «հող երդոյն», կազմակերպում էր իր անհատական տնտեսությունը և բերքը յուրացնում որպես մասնավոր սեփականություն։

3. Ամեն մի գյուղ-համայնք կոլեկտիվ կերպով պատասխանատու էր համայնքի առանձին անդամների արարքների համար։ Եթե համայնականը կատարում էր քրեական ծանր հանցանք և լքում համայնքը, ապա նրա հանցանքի ողջ պատասխանատվությունը ընկնում էր համայնքի վրա։ Համայնքը պարտավոր էր կամ հայտնաբերել հանցապարտին կամ թե տուգանք վճարել։

4. Համայնքը և համայնքային գյուղացիները «տուրքապարտ» և «հարկատու» էին։ Նրանք հարկեր ու տուրքեր էին վճարում ֆեոդալական պետությանը և հողատեր ֆեոդալներին. բացի հարկերից և տուրքերից նրանք պարտավոր էին կատարել նաև ֆեոդալական այլ պարհակներ։

5. Համայնքում ընդգրկված գյուղացիները հայտնի էին «հին հայրենի տէրք» կամ «հայրենատէրք» անունով։ Սրանք իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ և իրավունքներով տարբերվում էին հայ շինականության այլ խավերից։ Համայնքում եղած գյուղացիները հանդիսանում էին իրենց հողաբաժինների ժառանգական սեփականատերը։ Հայ ֆեոդալական իշխանությունները, ֆեոդալականացված վանքերն ու եկեղեցիները, աշխարհիկ ֆեոդալները դեռևս իրենց իշխանությունը չէին տարածել նրանց անձի վրա։ Հայոց թագավորները, մեծամեծ և գահակալ իշխանները ոչ թե «բռնությամբ», «զրկողությամբ», այլ «ընդ գնոյ» միայն կարող էին դնել նրանց հողակտորները։

Ոչ միայն վաղ, այլև զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում համայնքային գյուղացիության տոկոսը շատ մեծ էր և երկրի տնտեսության մեջ նա խաղում էր առաջնակարգ դերերից մեկը։

## СЕЛЬСКАЯ ОБЩИНА В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Проф. С. Е. АКОПЯН

(Р е з ю м е)

Вопрос о существовании в древней и средневековой Армении сельской общины затронут в трудах Н. Адонца, А. Манандяна, Х. Самуэляна и других. Если Адонц категорически отрицал существование сельской общины в Армении, то Манандян и Самуэлян, наоборот, доказывали ее наличие в Аршакидской и Багратидской Армении. Однако в трудах указанных историков не получили всесторонней разработки следующие вопросы: как и при каких исторических условиях возникла и развивалась сельская община; в каких взаимоотношениях находилась она с феодальным государством и землевладельцами; каково было социально-экономическое положение членов общины. На основании изучения первоисточников в статье делается попытка осветить перечисленные вопросы.